502. Հյուսիսային և հարավային դռների ճակատին ամրացված մետաղյա թիթեղների վրա՝
ԱՅՍ ԻՐԿԱԹԵԱՅ ՓԱՅՏԵԱՅ ԴՈՒՌՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐ ԱՄՆԱՅ Ի ՅԻՇԱՏԱԿ ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ ՄԿՐՏԻՉ ՏԷՐ-ԱՌԱՔԵԼԵԱՆ ԱՋՆՄԵԱՆՑ, Ի 1857 Թ.:

Հրատ. Ե. Շահազիզ, 60

Ս. Աստվածածնի հին գերեզմանոց

Այս գերեզմանոցում են թաղված եղել Հովհաննես Մարկոսյան Պոպովն ու Ստեփան Գևորգյան Նաթալյանը, որոնք որոշակի գումար են արամադրել Նոր Նախիջևանի աղքատների օգտին:

503. Հ. Մ. Պոպովի մահարձանին՝ 8 տող.

ԿԵԱՆՔԻԴ ՕՐԵՐԸ ՁԽՆԱՅԵԼՈՎ,
ԻՆՁՔԴ, ՍՏԱՑՈՒԱԾՔԴ ԱՋԳԻԴ ՁՈՀԵԼՈՎ,
ԴՈՒ ԱՂԲԻՒՐ ԵՂԱՐ ԾԱՐԱՒԻՆԵՐՈՒՆ
ՈՒ ՊԱՏՍՊԱՐԱՆ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐՈՒՆ:
ԱՅՈ՛, ՓԱՌԱՀԵՂ ԿԵԱՆՔՈՎ ՁԿԵՑԱՐ,
ԲԱՅՑ ՆԱԽԱՆՁԵԼԻ ՄԱՀՈՎ ՀԵՌԱՑԱՐ.
ՁԵՆ ՄՈՌԱՆԱԼ ՔԵԶ ՈՐԲՔ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ
ՔԱՆԻ ՈՐ ՔԱՂԱՔՍ ԿԱՅ ՅԱԿԱՍՏԱՆԻ:

Հրատ. Ե. Շահազիզ, 60

Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ս. Համբարձում եկեղեցին հիմնադրվել է Նոր Նախիջևանի հյուսիս-արևելյան մասում 1781 թ. մայիսի 2-ին, կառուցումն ավարտվելուց հետո օծվել է 1783 թ. օգոստոսի 27-ին: Ճարտարապետական ոճով նման է նախորդներին: Շնորհիվ Ե. Շահազիզի և Ս. Ջալալյանի մեզ են հասել հետևյալ արձանագրությունները.

504. Եկեղեցու բեմի ճակատին ազուցված խաչերի վրա՝
ՊՁԸ (1439). ԿԱՆԳՆԵՑԱՒ ՍՐ ՆՇԱՆՍ ՔՍ-Ի ԲԱՐԵԽԱՒՍ Է ՄՈՒՂԱՅԻՆ, ԿԱՐԱՊԵՏԻՆ:

Հրատ. Ե. Շահազիզ, 62

505. Ավազանի ստորև ազուցված մարմարե սալամարին.
ՅԻՇԱՏԱԿ Է ՍՐ ԱՒԱԶԱՆՍ ՍՐ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԺԱՄԻՆ ԽՈՒՊԵԱՐ ՕՂԼՈՒՆ ԲԱՐՍԵՂԻՆ ՀՕՐԸ ԳՐԻԳՈՐԻՆ ԵՒ ՄՕՐԸ՝ ՄԱՐԻԱՄԻՆ ՀՈԴՈՒՆ:
ԹՎ. 1799 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ:

Հրատ. Ե. Շահազիզ, 62

506. Արևելյան պատի մեջ արտաքուստ ազուցված մարմարե հուշասալին.
ՇՆՈՐՀԻՒ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՄԵՆԱՁՕՐԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՆԳՆԵԱԼ ԿԱՌՈՒՑԱՒ ՍՐ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ Ա. ԽՈՐԱՆՆ ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ ՇՈՐՊԱՐՈՆԵԱՆ ՊՐ ԽԱՁԱՏՈՒՐ ՄԱՏԹԷՈՍՈՎԻՆ ՀԱՆԴԵՐՁ ԿԵՆԱԿՑԻՒ ԵՒ ԾՆՈՂԻՒՔՍ Ի ՓԱՌՍ ՄԻՈՅՆ ԱԾՈՅՆ Ի ԳՈՎԵՍՏ ԵՒ Ի ՊԱՏԻՒ ՆՈՐԻՆ: ԱՐԴ, ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ԵՒ ԸՆԹԵՌՆՈՒՔ ԶԱՅՍ ՄԱՏԵԱՆ ԵՒ ԵԹ ՅԻՇԵՑԷՔ ԵՒ ԴՈՒՔ ԼԻՋԻՔ ՅԻՇԵԱԼ ԱԾ ՈՅՆ ՅԱՏԵԱՆ ՓԲԿՁԻՆ ԱՄԵՆԱՑՆԻ. ԹՎ. 1799-ԻՆ Ի ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ, Ի ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԱԾԱՐԵԱԼ ԵՒ ՊՍԱԿԱՁԴԵԱՑ

ԱՌԱՔԵԼԱՇԱՒՂ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՆՈՒԻՐԱԿԻՆ ՍԲՈՅ ԱԹՈՌՈՅ ՄԻԱԾՆԱ ԻՋԻ:

Հրատ. Ջալալյան, Բ, 467, ե. Շահազիզ, 62

Ս. Համբարձման եկեղեցու բակում եղել են բազմաթիվ սապանաքարեր, որոնց արձանագրություններից հիշատակելի են «Գոգոյան հայ օրիորդաց դպրոցի» հիմնադիր Մկրտիչ Գոգոյանին ու նրա ամուսին «Հաջի մամա» Սրբուհի Գոգոյանինը: Մ. Գոգոյանի չիրմաքարին գրված է եղել.

507. ԱՍՏԱՆՈՐ ԱՄՓՈՓԻՆ ՈՍԿԵՐՔ ՆՈՐՈՅՍ ՆԱԽԻՋԵՒԱՆԱՑ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՏՈՒԵԼԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՅ ՄԿՐՏՉԻ ԿՈԿՈՅԵԱՆ, ԾՆԵԼՈՅ Ի 1797 ԱՄԻ ԵՒ ԴԱՐՁԵԼՈՅ ՅԱՍՏՈՒԱԾ Ի 63 ԱՄԱՑ ՀԱՍԱԿԻ ԻՒՐՈՒՄ: ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆ, ՈՐ ԿՏԱԿԱՒԱՆԴԵՑԱՒ ՅԵՐՋԱՆԻԿ ՀԱՆԳՈՒՅՑԵԼՈՅՍ ԿԱՆԳՆԵԼ Ի ՍԵՓԱԿԱՆ ԾԱԽՍ ԻՒՐ ՎԱՍՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՁՔԱՒՈՐ ՕՐԻՈՐԴԱՑՆ ՀԱՅՈՅ ՔԱՂԱՔԻՍ ԲԱՐԵԳՈՐԾ ԿԵՆԱՑ ՆՈՐԻՆ ՅԻՇԱՏԱԿ ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ԵՒ ՓԱՌԱՒՈՐ ԿԱՑՑԷ ԱՊԱԳԱՅԻՑ. 27 ՅՈՒԼԻՍԻ 1866 ԹՈՒԻՆ:

Հրատ. ե. Շահազիզ, 62

Եկեղեցու արձաթյա խաչերն ունեցել են ՌՃԽԹ (1700), ՌՃԺԵ (1666) և 1890 թվականները:

Ս. ԳԵՎՈՐԳ

Նոր Նախիջևանի ս. Գևորգ եկեղեցին դանվելիս է եղել քաղաքի արևմտյան կողմում, Դոն գետի ափին: Ըստ Հ. Սրդուբյանի «Դաւթար»-ի հիմնադրվել է 1783 թ. և օծվել 1787 թ.: Կառուցվածքային առանձնահատկություններով նույնատիպ է նախորդներին: Հիմնական վերանորոգման է ենթարկվել 1853 և 1892 թվականներին:

Ս. Գևորգի պատերին եղել են բազմաթիվ խաչքարեր, որոնց արձանագրությունների ընթերցումը, եղծված լինելու պատճառով, մեծ դժվարություններ է հարուցել ե. Շահազիզին: Խաչքարերի մի մասը ծածկված է եղել յուղաներկով: Սակայն դրանցից մի քանիսը՝ ե. Շահազիզի վերծանությամբ:

508. Խաչքար, *քանդակազարդ, ազուցված է եղել հարավային դռան ձախ կողմին.*
ԿԱՆԳՆԵՑԱՎ ՍԲ ՆՇԱՆՍ Ի ԲԱՐԵԽՕՍՈՒԹԻՒՆ ՄՀԳՍԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԻՆ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ... ՊԻՌԱՅԻՆ, ՈՐԴԻՈՅՆ ԳՐԻԳՈՐԻՆ, ՍՏԵՓԱՆՆՈՍԻՆ ԵՒ ՄԻՆԱՍԻՆ, ԴՍՏԵՐԱՑՆ ԽԱՍՊԻՌԱՅԻՆ ԵՒ ՊԱՀԱՐԻՆ ԵՒ ՀԱՃԻ ՄՕՐՆ ԵՒ ՇԻՀՐԻՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՋԱՐՄԻՑՆ. ԹՈՒԻՆ ՌՃԼԵ (1686). ՋԵՌԱՄԲ ՍԱՐԳԻՍ ՎԱՐՊԵՏԻՆ:

Հրատ. ե. Շահազիզ, 63

509. Արծաթյա մասնատուփի վրա՝
ՅԻՇԱՏԱԿ Է ՄՀՏՍԻ ՍՏԵՓԱՆԻ ԳԵՆՋԵՑԵԱՆ. 1849, Ի ՍԲ ԳԷՈՐԳ, ՆԱԽԻՋԵՒԱՆ:

Հրատ. ե. Շահազիզ, 64

510. Ս. Գևորգի պահարանում եղած պղնձյա *թիթեղին՝*
ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԱՒ ՏԱՃԱՐՍ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅՆ ԳԷՈՐԳԱՅ ՋՕՐԱՎԱՐԻՆ ԱՐԳԵԱՄԲ ԵՒ ԾԱԽՈՒՔ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԱՑ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԱՏԹԷՈՍԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԵՐԵՑՓՈԽԵԱՆԻ՝ ԱՌՆ ԱԾԱՍԻՐԻ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏԻ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1853 ԵՒ ՄԵՐՈՅՍ ԱԶԳԱԿԱՆԻ ՌՅԲ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱԲՆԱԿ ՀԱՅՈՅ ՏԵԱՌՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ:

Հրատ. ե. Շահազիզ, 64